

## 5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

### 5.6. ՀՀ տարածքի 2004թ. հունվարի հիդրոոդերևութաբանական պայմանները

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հունվարին օդի ամսական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 1-4 աստիճանով (Տաշիրում՝ 5): Բարձր ջերմաստիճան գրանցվել է ամսի 5-8-ին, 13-18-ին, 23-31-ին, երբ օրական միջին ջերմաստիճանը բարձր էր նորմայից 2-5 աստիճանով (առանձին օրեր Արարատյան դաշտում՝ 9 աստիճանով):

Ամսվա առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում, Լոռիում, Տավուշում և Արցախում գրանցվել է +14 +19°C, լեռնային շրջաններում՝ +2 +7°C (հունվարի 23-ին): Սյունիքի նախալեռներում և Արարատյան դաշտում՝ +7 +12°C (հունվարի 25-ին): Սյունիքի հովիտներում և Երևանում այդ օրերին օդի առավելագույն ջերմաստիճանը գերազանցել է վերջին 100 տարվա բացարձակ առավելագույն արժեքները:

Ցածր է եղել ջերմաստիճանը հունվարի 1-4-ին, 9-12-ին և 19-21-ին (օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 2-7 աստիճանով):

Նվազագույն ջերմաստիճանը Շիրակում և Արագածոտնի լեռնային շրջաններում գրանցվել է -24 -30°C, Կոտայքում, Գեղարքունիքում, Լոռիում և Վայոց Ձորի լեռնային շրջաններում՝ -16 -22°C, Արարատյան դաշտում և նախալեռներում՝ -12 -16°C, Սյունիքի նախալեռներում՝ -6 -10°C:

Ամսական տեղումների քանակը շրջանների մեծ մասում ցածր է եղել նորմայից և կազմել նորմայի 54-77%-ը: Արարատյան դաշտում այն նորմայի սահմաններում է եղել, իսկ Տաշիրում, Աշոցքում և Ապարանում բարձր է եղել նորմայից և կազմել նորմայի 129-140%-ը:

Ձյան ծածկույթի բարձրությունը հունվարի 31-ի դրությամբ Շիրակում և Ջերմուկում կազմել է 47-59 սմ, Կոտայքում, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 27-38 սմ, Արագածոտնի նախալեռներում և Սևանում՝ 4-8 սմ, մնացած շրջաններում այն բացակայել է:

Հունվարին առանձին օրեր Արագածոտնում, Լոռիում, Գեղարքունիքում դիտվել է քամու ուժգնացում: Քամու արագությունը հասել է 13-18մ/վրկ, պոռթկումները՝ 24-28մ/վրկ:

Արարատյան դաշտում և դրա նախալեռներում առանձին օրեր դիտվել է մառախուղ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են իրենց նորմաների մոտավորապես 80-100%-ը:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում բարձրացել է 3սմ-ով և 2004թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել 1897.27 մ, որը 2003թ. նույն օրվա համեմատ բարձր է եղել 50 սմ-ով: Հունվարի 13-31-ին լճում դիտվել է եզրասառույց: